ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԾԱՒԵՐԱԿՍ

ԿՈՐԾԱՆԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ի բացավայր յաւերակացն իւր դերբուկ
Ցանչէն յանձայն ամայութեան գիր և տար՝
Դրնի չոճեացն ընդ հովանեաւ տրբտմատուգ
Պաշտեալ երբեմն աստուածատուն սրբարար.

Ուր ըստաշխից ոլորտապտոյտ խընկանուէր
Երբեմն ընդ ցիր ծաւալ ծրխոյն ծիրանի՝
Ուղէչք մայրից, ծառք հինաւուրց սարսռասեր
Սրփռէին բոյր անուշութեան վայրենի։

Պաշտոնէից երգ և պղընձոյ գանչ զօրեղ
Ընդ փլատակօք վաղ իսկ սուգան մռռացիկ.
Երաժշտակն օգոց միայն առ ետեղ
Ոլորէ զնուագ երգոցն 'ի լանջս ուռուցիկ։

Լուսաճաճանչ ակն արեգին, ամպք 'ի ստուեր
Ի քարաժեռան առնուն շրջան դարձադարձ.
Լուսին ընդ ճեղս ոստոց յածեալ տարուբեր
Ցընցղղէ զլոզս իւր արծաթիս սիրարծարծ։

Անդր 'ի խորէլս և աստ զորմովք կիսափուլ՝
Տունկք ջովացեալ, բոյս խիտ առ խիտ թարմատար,

digitised by A.R.A.R.@

Թուփ, մոլախոտ, կակաչ, բաղեղն և սրմբուլ
Խրոխտ 'ի ցրցունն յեւեւելս կան անդադար։

Ի զով կեփիւռ երանականը տեղւոջ
Իցիւ ինձ քունն յաւիտենից քաղցրանայր,
Ցայր նրչխարեալ արդ բեկորոցս 'ի խոռոչ
Դեռաբուսիկ ծաղկէ երգոյս երախայր։

Հ. Թ. Թ.

ՄԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Անցեալ տարի Իտալական Մամուլն կրկին անգամ հրատարակութեամբ 'ի լոյս ընծայեց գիրք մի լատին լեզուով՝ 'ի ձեռն Պրոֆ. Գամուրրինեայ, որոյ վերնագիրն է « Ս. Միլուիայ Ակուիտանացւոյ ուխտագնացութիւն 'ի Սուրբ տեղիս ». որոյ մէջ այլևայլ հետաքրքրական տեղեկութիւնք կը պարունակուին արևելեան ազգաց նկատմամբ։ Սոյն ուխտագնացս Ս. Միլուիա Ակուիտանացի 'ի Գաղղիոյ՝ ինչպէս կը թուի՝ հարուստ և աղնուական բարեպաշտ տիկին մ'էր. և ըստ կարծեաց հմուտ հրատարակչին, որում կը համաձայնին ևս ուրիշ նշանաւոր հնախոյզք և պատմագէտք՝ Ցէ – Ռոսսի և այլք, ապրեր է 'ի Դ դարու քրիստոնէութեան առ ժամանակօք կայսերութեան Մեծին Թէոդոսի, ինչպէս կը գուշակուի ևս յոճոյ և 'ի լեզուական քննութեանց։ Ըստ հաւանական կարծեաց, սոյն տիկինս բազմաթիւ ճանապարհորդակցօք և զօրականօք գնացեր է յուխտաւորութիւն 'ի սուրբ տեղիս Պաղեստինու, զուգելով ընդ բարեպաշտութեան և եռանդուն զգացմանց հոգւոյն՝ ևս և հետախոյզ աչք մը և հետամուտ միտք մը։ Յետ այցելելոյ ամենայն տնօրինական տեղեաց, կ'երթայ նաև յԱսորիս, 'ի Միջագետս, յեգիպտոս ևն, ուր կարգաւ կը ստորագրէ մի առ մի իւր տեսած ամենայն տեղերը, գետերը, լեռները և ուրիշ առարկաները։ Սոյն հրատարակութիւնս կրնայ իրաւի հետաքրքրական լինել հնախուզից և բանասիրաց իւր պէսպէս տեղեկութեամբքն՝ զորս կու տայ այն աշխարհաց տեղագրութեամբ. ուր կը ծանուցանէ ևս մեզ հին քրիստոնէական աւանդութիւնքը, կրօնական ծէսքը և սովորութիւնքը։

Մանրամասն կը պատմէ ևս իւր յեղեսիա երթալն և՝ այն տեղի եպիսկոպոսին ըրած հիւրամեծար ասպնջականութիւնը. կը ճոխանայ

digitised by A.R.A.R.@